46. Հաշվեցեք հնդկականերով այսպես՝ 5, 10, 15... մինչև 50-ը: Գրեցեք այդ թվերը:




47. Յետ հաշվեցեք հնդկականերով այսպես՝ 50, 45, 40... մինչև 5-ը: Գրեցեք այդ թվերը:

48. Նկարեցեք մի քառակուսի, վորի ամեն մի կողմը



լինի 5 սանտիմետր. ձախից-աջ և վերևից-ներքև բաժանեցե՛ք քառակուսին 5 հավասար մասերի այսպես.—



Հաշվեցե՛ք՝ քանի՞ շարք քառակուսիներ ստացաք:

Քանի՞ քառակուսի կա մի շարքում, 2, 3, 4, 5 շարքում:

Հինգ շարքում կա

$$5 + 5 + 5 + 5 + 5$$

$$5 \times 5$$

Վճրն ե հեշտ ու կարճ գրվում, գումարման թի՛ք բազմապատկման գործողութիւնն է:

49. Վերևի քառակուսուն նայելով  $5 \times 4$  արտահայտեցե՛ք ուղղանկյունով:

$$50. \quad 5 \times 1 \quad 20 + 5 \quad 30 + 5 \quad 40 + 5$$

$$5 \times 2 \quad 5 \times 5 \quad 5 \times 7 \quad 5 \times 9$$

$$5 \times 3 \quad 25 + 5 \quad 35 + 5 \quad 45 + 5$$

$$5 \times 4 \quad 5 \times 6 \quad 5 \times 8 \quad 5 \times 10$$

51. Այլում ծառերը անկված են շարքերով. ամեն մի շարքում 5-ական. քանի՞ ծառ կա 3 շարքում 4, 6, 9 շարքում:


52. 4 հատ 5 ուլբլիանոցը քանի՞ ուլբլի յե:

$$5 \times 2 \quad 5 \times 3 \quad 5 \times 9$$

$$5 \times 4 \quad 5 \times 5 \quad 5 \times 8$$

$$5 \times 6 \quad 5 \times 7 \quad 5 \times 10$$

53. Մի կտորը 3 պահունակ ունի, իսկ պահունակը՝ 5 փամփուշտ. քանի՞ փամփուշտ ե մի կտոր:



54. Աշակերտի Պաշր-Ավիաքլմի անդամագրքույկում փակցված էր 8 հատ 5 կողեկանոց գրոշմանիշ: Վորքան էր վճարել:

$$55. \quad 5 \times 6 + 20 \quad 15 - 10 \times 5 \quad 5 \times 10 - 40$$

$$5 \times 8 - 20 \quad 7 + 3 \times 5 \quad 5 \times 7 - 30$$

$$5 \times 2 \times 4 \quad 5 \times 2 \times 5 \quad 60 - 50 \times 5$$

56. Դպրոցի չորրորդ խմբի աշակերտները վերացրին 5 մարդու անգրագիտութիւն, իսկ հինգերորդ խմբի աշակերտները՝ դրանից 3 անգամ ավելի: Յերկու խմբերը միասին քանի՞ մարդու անգրագիտութիւն վերացրին:

57. Մեկն ունի 7 հատ 5 ուլբլիանոց. 20 ուլբլին ծախսեց: Ի՞նչքան փող մնաց մոտը:

58. Հաշվեցե՛ք զրավոր.

$$(5 \times 7) + (5 \times 6) \quad (75 - 70) \times (60 : 10)$$

$$(5 \times 10) - (5 \times 5) \quad (3 + 2) \times (80 : 10)$$

$$(5 \times 6) : (100 : 10) \quad (50 : 10) \times (47 - 45)$$



ԲԱԺԱՆԵԼ 5-Ի ՎՐԱՍ

59. 40 կոպեկը հավասար բաժանեցե՛ք 5 աշակերտի.  
վորքան ստացավ ամեն մեկը:

60. 50 լոբու հատիկ հավասարապես տեղավորեցե՛ք  
5 լուցկու դատարկ տուփերում. ամեն մի տուփում քանի՞  
հատ յեղավ:

61. 35 կոպեկով քանի՞ 5 կոպեկանոց նամակադրոշմ  
կարելի յե գնել:

62. Քանի՞ 5 ուրբլիանոցով կարելի յե փոխարինել  
10, 20, 50 ուրբլիանոցը:

|     |        |        |        |        |
|-----|--------|--------|--------|--------|
| 63. | 5 : 5  | 30 : 5 | 50 : 5 | 45 : 5 |
|     | 10 : 5 | 35 : 5 | 40 : 5 | 35 : 5 |
|     | 15 : 5 | 40 : 5 | 30 : 5 | 25 : 5 |
|     | 20 : 5 | 45 : 5 | 20 : 5 | 15 : 5 |
|     | 25 : 5 | 50 : 5 | 10 : 5 | 5 : 5  |

64. Կորանտենտրոնը 5 կորանտեսության հավասա-  
րապես բաժանեց 50 ազնվացեղ խոզ: Ամեն մի կորանտե-  
սություն քանի՞ խոզ ստացավ:

65. Մեքենատրակտորային կայանն իր ունեցած 20  
տրակտորներն ուղարկեց մոտակա 5 գյուղերի կորանտե-  
սություններում հավասարապես աշխատեցու: Ամեն մի  
կորանտեսություն քանի՞ տրակտոր գնաց:

66. Տրակտորը 5 ժամում 10 կիլոգրամ բենզին ե  
վառում: Մի ժամում քանի՞ կիլոգրամ բենզին ե վառում:

67. Մի կիլոգրամ բրդից կարելի յե զործել 5 զույգ  
կանացի գուլպա: Քանի՞ կիլոգրամ բուրդ ե հորկավոր 45  
զույգ գուլպայի համար:

68. Կազմեցե՛ք խնդիրներ, վորտեղ 25, 15, 40, 35  
բաժանված լինի 5-ի վրա:

69. Տեսրուում գրեցե՛ք 5-ի բաժանվող բոլոր թվերը  
5-ից մինչև 50-ը:

|     |             |             |           |
|-----|-------------|-------------|-----------|
| 70. | 20 : 5 + 10 | 5 × 9 : 5   | 5 × 5 : 5 |
|     | 50 : 5 — 5  | 25 + 15 : 5 | 5 : 5 × 5 |
|     | 25 : 5 × 5  | 50 — 25 : 5 | 5 + 5 : 5 |

71. Մի բանվորական շենքի կառուցման վրա աշ-  
խատում էյին 25 վորմնադիր, 5 անդամ պակաս հյուան  
և հյուաներից 3 անդամ ավելի քարտաշ: Քանի՞ քարտաշ  
եր աշխատում:

72. Փայտամշակման գործարանի յուրաքանչյուր  
բանվոր պատրաստի մասերից պլանով պիտի պատրաստեր  
ամսական 45 պահարան. յուրաքանչյուր հարվածային  
բանվոր պատրաստեց 5-ով ավելի: Ամեն մի վեցորյակում  
հարվածային բանվորը քանի՞ պահարան պատրաստեց:

73. Հաշվեցե՛ք.

|                     |                       |
|---------------------|-----------------------|
| (40 : 5) + (45 : 5) | (50 : 5) : (25 : 5)   |
| (35 : 5) — (25 : 5) | (84 — 54) : (65 — 60) |
| (50 : 5) × (20 : 5) | (5 × 8) : (50 : 10)   |
| 75 — (15 : 5)       | 20 : (100 — 95)       |

74. Բոստովի գյուղատնտեսական մեքենաշինական  
գործարանում ամեն մի 5 բուլեյում պատրաստում են 10  
գութան.  $\frac{1}{2}$  ժամում քանի՞ գութան են պատրաստում:

75. Մի թիվ վերցրել մաքուր և բազմապատկելով  
5-ով ստացա 25. իմացե՛ք՝ ի՞նչ թիվ էյի վերցրել:



76. Մի թիվ վերցրի մտքումս և բաժանելով 5-ի ստացա 10. իմացե՛ք՝ ի՞նչ թիվ էյի վերցրել:

ԱՆՀԱՅՏ ԹԻՎԸ ԳՏՆԵԼՈՒ ԽԱՂ.

Խաղում են այսպես.—մեկը նստում է կենտրոնում, իսկ մյուսները նրա շուրջը շրջան են կազմում. կենտրոնում նստածն առաջարկում է շրջանի յուրաքանչյուրը ընկերոջը հերթով.—

— Մի թիվ վերցրո՛ւ:

— Վերցրի՛:

— 5-ը բազմապատկիր այդ թվով:

— Բազմապատկեցի:

— Ի՞նչքան ստացար:

— 30:

— Քո վերցրած թիվը 6 եր: Յեւ այսպես շարունակում են, պայմանով, վոր վերցրած թիվը մեծ չլինի



10-ից և միշտ եւ առաջարկվում է 5-ը բազմապատկել վերցրած թվով: Ճիշտ չվորոշելու դեպքում կենտրոն

նստածն անցնում է շրջան, իսկ մի ուրիշը փոխարինում է նրան: Նույն ձևով խաղում էք բաժանման խաղը սլայմանով, վոր վերցրած թիվը 5-ից պակաս և 50-ից ավել չլինի և 5-ի վրա բաժանվող լինի: Լավ խաղալու համար նախ գտե՛ք այս որինակներում անհայտ թիվը.

$$77. \quad 5 \times x = 10 \quad x : 5 = 10$$

$$5 \times x = 20 \quad x : 5 = 8$$

$$5 \times x = 30 \quad x : 5 = 5$$

$$5 \times x = 40 \quad x : 5 = 4$$

$$5 \times x = 50 \quad x : 5 = 2$$

$$5 \times x = 15 \quad x : 5 = 3$$

$$5 \times x = 25$$

$$5 \times x = 35$$

$$5 \times x = 45$$

$$x : 5 = 5$$

$$x : 5 = 7$$

$$x \times 5 = 9$$

ԲԱԶՄԱԳԱՏԿԵԼ 2-Ը

78. Հաշվեցե՛ք ավելացներով 2 այսպես.  
2, 4, 6 . . . . մինչև 20-ը.

79. Հաշվեցե՛ք պակսեցներով 2 այսպես.  
20, 18 . . . . մինչև 2-ը:

80. Հաշվեցե՛ք 2 կոպեկանոցներով քանի՞ կոպեկ է

2, 4, 6, 8, 3, 5, 7, 9, 10



-ը:



81. Նկարեցե՛ք մի ուղղանկյուն, վորի յերկարությունը լինի 10, իսկ լայնությունը 2 սանտիմետր: Ուղղանկյունը ձախից-աջ բաժանեցե՛ք 10, իսկ վերևից-ներքև 2 հավասար մասերի այսպես. —



Հաշվեցե՛ք քանի՞ շարք քառակուսիներ ստացվեց: Քանի՞ քառակուսի կա մի շարքում 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 շարքում:

10 շարքում կա՝

$$2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 + 2 = 20$$

$$2 \times 10 = 20$$

Վճր գործողությամբ ավելի հեշտ և կարճ կարելի չե հաշվել. գումարման թիւ բաղմապատկման:

82. Գրեցե՛ք այսպես.

$$\begin{aligned} 2 \times 1 &= 2 \\ 2 \times 2 &= 2 + 2 \\ 2 \times 3 &= 2 + 2 + 2 \\ 2 \times 4 &= . . . . . ] \\ 2 \times 5 &= . . . . . ] \\ 2 \times 6 &= . . . . . ] \\ 2 \times 7 &= . . . . . ] \\ 2 \times 8 &= . . . . . ] \\ 2 \times 9 &= . . . . . ] \\ 2 \times 10 &= . . . . . ] \end{aligned}$$

83. Մի տուփ լուցկին արժե 2 կոպէկ. վճրքան արժե 5, 7, 3, 4, 6, 8, 10 տուփ լուցկին:

84. Բաղմապատկեցե՛ք բանավոր ապա գրավոր.

$$\begin{array}{ccc} 2 \times 2 & 2 \times 8 & 2 \times 9 \\ 2 \times 4 & 2 \times 10 & 2 \times 7 \\ 2 \times 6 & 2 \times 1 & 2 \times 5 \end{array}$$

85. Աշակերտը զնեց 7 զրչածայր, հատը 2 կոպէկով և 2 մատիւ՝ հատը 5 կոպէկով: Քանի՞ կոպէկ ծախեց:

86. Մի աշակերտ ուներ 9 հատ 2 կոպէկանոց. գրա-նից 10 կոպէկով մի գիրք զնեց. քանի՞ կոպէկ մնաց մօտը:

$$\begin{array}{ll} 87. 70 + (2 \times 5) & 80 : (2 \times 5) \\ 60 - (2 \times 10) & 25 + (2 \times 7) \\ 10 \times (2 \times 3) & 35 - (2 \times 8) \\ & 2 \times (90 : 10) \\ & 2 \times (2 \times 4) \\ & 2 \times (7 + 3) \end{array}$$

88. Դասարանում նստարանները տեղավորված եյին 3 շարքում, յուրաքանչյուրում 5-ական: Ամեն մի նստարանի վրա նստում եյին 2 սովորող: Քանի՞ սովորող եյին տեղավորվում մի շարքում, ամբողջ դասարանում:

ԲՍԺԱՆԵՆԼ 2-Ի ՎՐԱ

89. 10 տետրը հավասարապես բաժանեցե՛ք 2 աշակերտի, վճրքան ստացավ ամեն մեկը:

90. 18 կոպէկը հավասարապես բաժանեցե՛ք 2 աշակերտի. վճրքան ստացավ յուրաքանչյուրը:



91. Մեկն ուներ 14 կոպեկի 2 կոպեկանոցներ, քանի՞ 2 կոպեկանոց ուներ:


|     |        |        |        |        |
|-----|--------|--------|--------|--------|
| 92. | 2 : 2  | 12 : 2 | 20 : 2 | 8 : 2  |
|     | 4 : 2  | 14 : 2 | 10 : 2 | 4 : 2  |
|     | 6 : 2  | 16 : 2 | 16 : 2 | 6 : 2  |
|     | 8 : 2  | 18 : 2 | 12 : 2 | 2 : 2  |
|     | 10 : 2 | 20 : 2 | 18 : 2 | 14 : 2 |

93. 2 կիրգրամ բրդից կարելի յե 10 գույգ գուլպա գործել: 70 գույգ գուլպա գործելու համար քանի՞ կիրգրամ բուրդ ե հարկավոր:

94. Հաշվեցե՛ք.

$$\begin{aligned} (2 \times 10) : (2 \times 5) & \quad (14 : 2) + (8 : 2) \\ (20 : 2) \times (10 : 2) & \quad (16 : 2) - (6 : 2) \\ (18 : 2) - (12 : 2) & \quad (70 - 52) : (22 - 20) \end{aligned}$$

95. Քույր ու յեղբայր հորից ստացան 8 մատիտ, 16 տետր և 12 գրչածայր ու հավասարապես բաժանեցին իրենց մեջ: Քանի՞ մատիտ, քանի՞ տետր ու քանի՞ գրչածայր ստացավ ամեն մեկը:



96. Մի վարկյանում անցնում են

|                  |         |          |
|------------------|---------|----------|
| 2ին . . . . .    | 2 մետր  | հանապարհ |
| Ավտոն . . . . .  | 16 մետր | »        |
| Գնացքը . . . . . | 12 մետր | »        |

Քանի՞ անգամ արագ ե անցնում ավտոն քան ձին: Քանի՞ անգամ դանդաղ ե անցնում ձին քան գնացքը:

Մի վարկյանում ավտոն քանի՞ մետրով ավելի յե անցնում քան ձին, քան գնացքը:

97. Մի թիվ վերցրի մտքումս. յեթե այդ թիվը բազմապատկեք 9-ով, կստանաք 18: Ի՞նչ թիվ ե վերցրածս:

98. Մի թիվ վերցրի մտքումս. յեթե բաժանեք այդ թիվը 2-ի, կստանաք 7: Ի՞նչ թիվ ե վերցրածս:

99. Գտե՛ք անհայտ թիվը և դրեցե՛ք x-ի տեղը:

|                   |              |
|-------------------|--------------|
| $2 \times x = 4$  | $x : 2 = 10$ |
| $2 \times x = 8$  | $x : 2 = 8$  |
| $2 \times x = 6$  | $x : 2 = 6$  |
| $2 \times x = 10$ | $x : 2 = 4$  |
| $2 \times x = 14$ | $x : 2 = 2$  |
| $2 \times x = 20$ | $x : 2 = 9$  |

$$2 \times x = 12$$

$$2 \times x = 16$$

$$2 \times x = 18$$

$$x : 2 = 7$$

$$x : 2 = 5$$

$$x : 2 = 3$$

100. 10-ի ձևով կազմակերպեցե՛ք 2-ի բազմապատկման և բաժանման խաղը:

5-ի ձևով կազմակերպեցե՛ք անհայտ թիվը գտնելու խաղը:



ԲԱԶՄԱԳԱՏԿԵԼ 4-Ը

1. Հաշվեցե՛ք, ավերացներով 4 ախպես

4, 8, 12 . . . մինչև 40-ը:

2. Գրեցե՛ք տետրում 4, 8, 12 . . . մինչև 40-ը:

3. Հաշվեցե՛ք՝ հանելով 4 ախպես

40, 36, 32 . . . մինչև 4-ը:

4. Գրեցե՛ք տետրում 40, 36, 32 . . . մինչև 4-ը:

5. Հաշվեցե՛ք՝ քանի՞ թանաքաման կա մի շարքում,  
2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 շարքում:



$$4 \times 1$$

$$4 \times 2$$

$$4 \times 3$$

$$4 \times 4$$

$$4 \times 5$$

$$4 \times 6$$

$$4 \times 7$$

$$4 \times 8$$

$$4 + 9$$

$$4 \times 10$$

$$6. 4 \times 1$$

$$4 + 4$$

$$4 \times 2$$

$$4 + 4 + 4$$

$$4 \times 3$$

$$4 + 4 + 4 + 4$$

$$(4 + 4) \times (4 + 4)$$

$$(4 \times 2) + (4 \times 2)$$

$$4 \times 4$$

$$4 + 4 + 4 + 4 + 4$$

$$(4 \times 2) + (4 \times 3)$$

$$4 \times 5$$

$$4 + 4 + 4 + 4 + 4 + 4$$

$$(4 \times 2) + (4 \times 2) + (4 \times 2)$$

$$(4 \times 3) + (4 \times 3)$$

$$4 \times 6$$

$$(4 \times 3) + (4 \times 4)$$

$$4 \times 7$$

$$(4 \times 4) + (4 \times 4)$$

$$4 \times 8$$

$$(4 \times 4) + (4 \times 5)$$

$$4 \times 9$$

$$(4 \times 5) + (4 \times 5)$$

$$4 \times 10$$

7. Ընտանիքը տասնորյակում սպառում է 4 կիլո-  
գրամ նավթ. վորքան կսպառի մի ամսում, 2, 3 ամսում:

8. Շենքի համար դործադրվող աղյուսի քաշը 4 կի-  
լոգրամ է. բանվորը տեղափոխում է 10 աղյուս: Քանի՞  
կիլոգրամ ծանրություն է վերցնում:

9. Ձին քաշում է սայրակը 5 պարկ ալյուրով, իսկ  
բեռնատար ավտոն՝ 8 անգամ ավելի: Քանի՞ պարկ ալ-  
յուր է տեղափոխում բեռնատար ավտոն:



10. Հաշվեցեք.

$$\begin{array}{lll} 4 \times 5 + 15 & 4 \times 6 + 35 & 4 \times 3 + 27 \\ 4 \times 7 - 19 & 15 - 11 \times 4 & 90 - 86 \times 8 \\ 4 \times 2 + 22 & 4 \times 4 + 4 & 5 \times 2 \times 4 \end{array}$$

11. Վագոնում չորս-չորս նստելու 9 նստարան կար, 45 մարդ եր տեղավորված: Քանիսն էյին կանգնած:

12. Հաշվեցեք.

$$\begin{array}{ll} (4 \times 4) + (4 \times 5) & (2 \times 2) \times (30 : 5) \\ (4 \times 10) - (4 \times 3) & (74 - 70) \times (96 - 92) \\ (20 : 5) \times (4 \times 2) & (4 \times 7) + (4 \times 9) \end{array}$$

13. Յերրորդ վճռական տարվա փոխառության տոմսեր գնեցին. առաջին խումբը 10 ուղբու, յերկրորդը՝ 4 անգամ ավելի առաջինից, իսկ յերրորդը՝ 40 ուղբով ավելի յերկրորդից: Քանի՞ ուղբու տոմս գնեց յերրորդ խումբը:

ԲՄԺԱՆՆԵՆԻ 4-Ի ՎՐՄ.

14. 12 մատիար բաժանեցեք 4 աշակերտի: Քանի՞ մատիա ստացավ ամեն մեկը:

15. Գիրքը 20 կուպեկ արժե, իսկ տետրը՝ 4: Քանի՞ անգամ գիրքը թանգ արժե տետրից:

16. 32 պիտներ չորս-չորս շարք կանգնեցրին. Քանի՞ շարք ստացվեց:

$$\begin{array}{llll} 17. & 4 : 4 & 4 \times 5 & 32 : 4 & 16 : 4 \\ & 4 \times 2 & 20 : 4 & 4 \times 9 & 8 : 4 \\ & 8 : 4 & 4 \times 6 & 36 : 4 & 36 : 4 \\ & 4 \times 3 & 24 : 4 & 4 \times 10 & 28 : 4 \\ & 12 : 4 & 4 \times 7 & 40 : 4 & 20 : 4 \\ & 4 \times 4 & 28 : 4 & 32 : 4 & 12 : 4 \\ & 16 : 4 & 4 \times 8 & 24 : 4 & 4 : 4 \end{array}$$

18. Յեմենաից և ավաղից շաղախ պատրաստելու համար 1 պարկ ցեմենտի հետ խառնում են 4 պարկ ա-վաղ: 20 պարկ ավաղի հետ քանի՞ պարկ ցեմենտ պետք է խառնել:

19. Սենյակի հատակը տախտակելու համար հարկա-վոր եր վորոշ լայնության 40 մետր տախտակ: Քանի՞ տախտակ եր անհրաժեշտ, յեթե ամեն մի տախտակի յեր-կարությունը 4 մետր եր:

20. Սենյակի լուսամուտի փեղկերն ունեն 4 շրջա-նակ. ապակեգործը 16 հատ ապակի դրեց: Քանի՞ լուսա-մուտ ունեւր սենյակը:

Կազմեցեք խնդիրներ, վորտեղ 40, 24, 32, 16 բա-ժանված լինի 4-ի:

$$\begin{array}{llll} 21. & 32 : 4 + 12 & 4 \times 9 : 4 & 4 \times 4 : 4 \\ & 40 : 4 - 6 & 12 + 16 : 4 & 4 : 4 \times 4 \\ & 16 : 4 \times 4 & 40 - 16 : 4 & 32 - 20 : 4 \end{array}$$

22. Քաղաքային այգու ծառուղիներից մեկը 36 մետր յերկարություն ունեւր. յերկու կողմից ծառեր էյին տնկված իրարից 4 մետր հեռավորության վրա: Քանի՞ ծառ եր տնկված յերկու կողմից:



23. Հաշվեցեք.

$$\begin{array}{lll} 60 + (40 : 4) & 24 : (2 \times 2) & 4 \times (28 : 4) \\ 80 - (32 : 4) & 10 \times (8 : 4) & 72 - (12 : 4) \\ 36 : (16 : 4) & 4 \times (20 : 4) & 18 + (4 : 4) \end{array}$$

24. Վերցրե՞ք մի թուղթ, ծալելով միջից հավասար կիսեցեք, ստացված կտորները նորից ծալելով կիսեցեք: Քանի մասի բաժանեցի՞ք թուղթը: Ամեն մի մասը կլինի թղթի  $\frac{1}{4}$  մասը:

25. Տետրում նկարեցե՞ք մի քառակուսի և բաժանեցե՞ք չորս հավասար մասի: Քանի  $\frac{1}{4}$  մասեր ստացա՞ք:



Ուրեմն ամբողջ քառակուսին քանի  $\frac{1}{4}$  մասեր ունի:  $\frac{1}{4}$  մասը գծիկներով սևացրե՞ք. քանի  $\frac{1}{4}$  մաս մնաց. գծիկներով սևացրե՞ք

կրկին  $\frac{1}{4}$  մասը. քանի  $\frac{1}{4}$  մաս մնաց: Մնացածը քառակուսու վրո մասն է. ուրեմն  $\frac{1}{2}$ -ը քանի  $\frac{1}{4}$ -ի յե հա-

վասար.  $\frac{1}{2} = \frac{1}{4} + \frac{1}{4}$

26. Խնձորը բաժանեցե՞ք 2 հավասար մասի. ինչպիսի՞ մասեր ստացա՞ք.  $\frac{1}{2}$  մասը նորից բաժանեցե՞ք 2 հավասար մասի. ստացված մասերը խնձորի վրո մասերը կլինեն:  $\frac{1}{4}$  մասը ստանալու համար միշտ պետք է բաժանել 4-ի:

27. Աշակերտն իր ունեցած 32 կոպեկի  $\frac{1}{4}$  մասը տրվեց մատիտի, մնացածի  $\frac{1}{4}$  մասն էլ՝ ռետինի: Քանի կոպեկ տվեց ռետինին:

28. Հացի կիրոզրամն արժե 20 կոպեկ: Վորքան արժե  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{4}$  կիրոզրամ հացը:

29. Մեկը գնեց մեկ և կես կիրոզրամ հաց, իսկ մյուսը մեկ և քառորդ կիրոզրամ հաց: Առաջինը քանի կոպեկ և ի՞նչքան ավելի վճարեց յերկրորդից:

30.  $\frac{1}{2}$  Յեվ  $\frac{1}{4}$  ԽԱՂ.

Ուսուցիչն ասում է մի թիվ, իսկ աշակերտները գրում են տետրերում այդ թիվը, բաժանելով  $\frac{1}{2}$  և  $\frac{1}{4}$ -ի այսպես.—


$$\begin{array}{l} 28 = 14 \quad 14 = 7 \quad 7 \quad 7 \quad 7 \\ 36 = \quad \quad = \quad \quad \quad \end{array}$$

31. Գտե՞ք այս որինականերում անհայտ թիվը և կադմակերպեցե՞ք անհայտ թվի խաղը.

$$\begin{array}{lll} 4 \times x = 40 & x : 4 = 1 & 4 \times x = 20 \\ 4 \times x = 32 & x : 4 = 4 & 4 \times x = 28 \\ 4 \times x = 24 & x : 4 = 7 & 4 \times x = 36 \\ 4 \times x = 16 & x : 4 = 10 & x : 4 = 5 \\ 4 \times x = 8 & x : 4 = 9 & x : 4 = 3 \\ 4 \times x = 4 & x : 4 = 8 & x : 4 = 2 \\ 4 \times x = 12 & x : 4 = 6 & x : 4 = 7 \end{array}$$




# ՈՒՂՂԱՆԿՅՈՒՆ ՊՐԻՉՄԱ



Սա ուղղանկյուն պրիզմա է.

Աղյուսը և լուցիկը տուփն ունեն ուղղանկյուն պրիզմայի ձև:



Այս տունն առանց տանիքի ունի ուղղանկյուն պրիզմայի ձև. տան ամեն մի պատը նույնպես ուղղանկյուն պրիզմայի ձև ունի:

32. Ի՞նչ ձև ունի ձեր դասարանը:

33. Ձեր շրջապատում ցույց տվե՞ք ուղղանկյուն պրիզմայի ձև ունեցող առարկաներ:

34. Փայտից պատրաստեցե՞ք ուղղանկյուն պրիզմա:

35. Կավից պատրաստեցե՞ք ուղղանկյուն պրիզմա:

36. Փոքրիկ խորանարդները միմյանց վրա դասավորելով կառուցե՞ք ուղղանկյուն պրիզմաներ այսպես. —



37. Ուղղանկյուն պրիզման դրե՞ք թղթի վրա և չորս կողմը գծեցե՞ք մատիտով: Ի՞նչ պատկեր ստացա՞ք:

Այժմ դրե՞ք հերթով մյուս կողմերը և դարձյալ չորս կողմը գծեցե՞ք մատիտով. ամեն անգամ ի՞նչ պատկեր ե՞ք ստանում:


Ամեն անգամ ստացվում է ուղղանկյուն: Հենց դրա համար էլ պրիզման կոչվում է ուղղանկյուն: Յերբեմն ուղղանկյուն պրիզմայի կողմերից յերկուսը քառակուսի լինում այսպես. —



38. Փոքրիկ խորանարդներից այս ձևի ուղղանկյուն պրիզմա կառուցե՞ք:

39. Վանդակավոր թղթի վրա գծազրեցե՞ք ուղղանկյուն պրիզմա. այսպես. —





ՋԵՐՄԱՆՈՒԹ



Ջերմաչափով վորոշում են ջերմաստի-  
շանը: Ջերմաչափի վրա կան բաժանումներ  
թե՛ գերոյից ներքև և թե՛ վերև. այնպես  
վոր բավական չե՛ միայն ասել, թե ջերմա-  
չափը ցույց է տալիս որինակ 5 աստիճան.  
պետք է նաև ասել՝ գերոյից ներքև թե՛  
վերև:

Ջերոյից ներքև յեղած բաժանում-  
ները ցույց են տալիս ցրտությունը, իսկ  
վերևինը՝ տաքությունը:

Փոխանակ գրելու գերոյից վերեւ 5  
աստիճան, կարճ գրվում է  $+5^{\circ}$  կամ գերո-  
յից ներքև 5 աստիճանը՝  $-5^{\circ}$ :

$+$  և  $-$  նշանները ցույց են տալիս  
գերոյից վերև և ներքևը, իսկ փոքրիկ  
գերոն նշանակում է աստիճան: Որինակ  
 $+15^{\circ}$  կարգացվում է 15 աստիճան տա-  
քություն.

$-15^{\circ}$  կարգացվում է 15 աստիճան ցրտու-  
թյուն:

Պատի ջերմա-  
չափ

40. Կարգացեք.

$+12^{\circ}$ ,  $-18^{\circ}$ ,  $+2^{\circ}$ ,  $-9^{\circ}$ ,  $-13^{\circ}$ ,  $+27^{\circ}$

$+30^{\circ}$ ,  $-28^{\circ}$ ,  $-1^{\circ}$ ,  $+17^{\circ}$ ,  $+16^{\circ}$ ,  $+14^{\circ}$

41. Նայեցեք նկարի ջերմաչափին. քանի՞ աստիճան  
է ցույց տալիս:

42. Իմացեք դասարանում, ձեր տանը, դրսում քանի՞  
աստիճան է ցույց տալիս ջերմաչափը և գրի առեք:

43. Որական 3 անգամ, առավոտյան, կեսօրին և  
յերեկոյան իմացեք ջերմաստիճանը դրսում և գրի առեք  
ձեր յեղանակի որացույցում:

Ի՞նչ էք նկատում, յերբ է ցուրտ լինում և յերբ  
տաք:

44. Դրսում առավոտյան ջերմաստիճանը  $-3^{\circ}$

» կեսօրին »  $+4^{\circ}$

Քանի՞ աստիճան տաքացավ յեղանակը:

45. Դրսում կեսօրին ջերմաստիճանը  $+6^{\circ}$

» յերեկոյան »  $-2^{\circ}$

Քանի՞ աստիճան ցրտեց յեղանակը:

46. Մի խմբի աշակերտներ հետևելով յեղանակին  
ամեն որ ժամի 1-ին ջերմաչափի սնդիկի սյունի բարձ-  
րությամբ վորոշում էին ջերմաստիճանը և գրի առնում  
իրենց յեղանակի որացույցներում:


Մայիս ամսվա առաջին տասներկու օրվա համար առա-  
ջան հետևյալ ջերմաստիճանները:



| Մայիս       | 1  | 2  | 3  | 4   | 5   | 6  | 7   | 8  | 9  | 10 |
|-------------|----|----|----|-----|-----|----|-----|----|----|----|
| Ջերմաստիճան | 6° | 9° | 4° | 12° | 10° | 8° | 10° | 3° | 9° | 5° |

Տեղում կազմեցեք մայիս ամսվա առաջին տասնորդակի բարեխառնության դիագրամն ամեն 1° համար վերցնելով 1 վանդակ այսպես.—

ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆՈՐՅԱԿԻ ԲԱՐԵՆԱՌՆՈՒԹՅՈՒՆԸ




Վեր ուրվա Ջերմաստիճանն և ամենից բարձր:  
Վեր ուրվա Ջերմաստիճանն և ամենից ցածր:

47. Կոլանտեսությունը ցանեց

Աշնանացան ցորեն . . . . 100 ցենտներ  
Գարնանացան ցորեն . . . . 60 »  
Գարի . . . . . 80 »  
Հաճար . . . . . 45 »

Կազմեցեք կոլանտեսության ցանած սերմերի դիագրամը 5 ցենտների համար վերցնելով 1 վանդակ:

48. Մենասնեսի յեվ կոլսնեսության բերքը:



Հավասար հողամասերից ստացան բերք

| Հատիկներ      | Մենասնեսը | Կոլանտեսությունը |
|---------------|-----------|------------------|
| Հաճար . . . . |           |                  |
| Ցորեն . . . . |           |                  |
| Գարի . . . .  |           |                  |


Դիագրամի ուղեւթյամբ լրացրեք բաց աջունակները:

ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ 8-Ը

49. Թատրոնի դահլիճում աթոռները շարված են շարքերով, ամեն շարքում 8 հատ: Հաշվեցեք՝ քանի մարդ



կանգնվորվեն 2 շարքում 4, 8, 10, 5, 3, 6, 9, 7 շարքում:



|              |               |
|--------------|---------------|
| $8 \times 1$ | $8 \times 6$  |
| $8 \times 2$ | $8 \times 7$  |
| $8 \times 3$ | $8 \times 8$  |
| $8 \times 4$ | $8 \times 9$  |
| $8 \times 5$ | $8 \times 10$ |

50. Տեսարում գծեցեք տաս վանդակ, առաջինում գրեք 8 և մյուսներում իրարից 8-ով ավելի. այսպես.

|   |    |    |  |  |
|---|----|----|--|--|
| 8 | 16 | 24 |  |  |
|   |    |    |  |  |

$$\begin{array}{ll}
 51. \quad 8 + 8 + 8 & 8 + 8 + 8 \times 8 \\
 8 \times 2 + 8 & (8 \times 2) + (8 \times 2) \\
 8 \times 3 & 8 \times 4 \\
 8 \times 1 & 8 \times 5 \\
 8 \times 2 & 8 \times 6 \\
 8 \times 3 & 8 \times 7
 \end{array}$$

$$\begin{array}{l}
 (8 \times 4) + (8 \times 4) \\
 (8 \times 3) + (8 \times 5) \\
 8 \times 8 \\
 8 \times 7 \\
 8 \times 9 \\
 8 \times 10
 \end{array}$$


52. 8-ժամյա բանվորական որվա ընթացքում բանվորը վեցորյակում քանի՞ ժամ եր աշխատում: Այժմ քանի՞ ժամ ե աշխատում:

53. Զուգահեռ մի ժամում գործում եր 8 մետր: 8-ժամյա բանվորական որում ինչքան ե գործում: Ներկայումս շուրակը գործում ե մի ժամում 10 մետր, 7-ժամյա բանվորական որում ինչքան ե գործում: Քանի՞ մետրով ավելի յե գործում ներկայումս շուրակը:

$$\begin{array}{lll}
 54. \quad 36 - (8 \times 4) & (15 - 7) \times 8 & 40 - (8 \times 2) \\
 95 - (8 \times 10) & 74 + (8 \times 3) & 30 + (8 \times 7) \\
 8 \times (7 + 2) & 65 - (8 \times 5) & 56 - (8 \times 6)
 \end{array}$$

55. Շախմատի տախտակն ունի 8 շարք, ամեն մի շարքը 8 վանդակից: Խաղի սկզբում Ֆիդուրաներով զբաղեցրված եր 32 վանդակ: Քանիսն եր զատարկ:






56. Ցաքանն ունի 7 շարք ատամներ, ամեն մի շարքում 8 հատ. ատամներից 7 փչացել են. քանիսն են մնացել:

**ԲԱԺԱՆԵԼ 8-Ի ՎՐԱ**

57. 80 տետրը բաժանեցեք 8 աշակերտի. քանիսը տվիք ամեն մեկին:

58. Արհեստանոցում յեղած 32 մամլակները տեղավորված են 8-ական ամեն մի շարքում: Քանի՞ շարք են կազմում մամլակները:



**Մամլակ**

59. Տետրում 10 վանդակ գծեցեք և 8-ով սլակսեցնելով՝ գրեցեք 80-ից մինչև 8 ալսպես. —

|    |    |  |  |   |
|----|----|--|--|---|
| 80 | 72 |  |  |   |
|    |    |  |  | 8 |

|     |        |        |        |        |
|-----|--------|--------|--------|--------|
| 60. | 8 : 8  | 48 : 8 | 72 : 8 | 16 : 8 |
|     | 16 : 8 | 56 : 8 | 56 : 8 | 32 : 8 |
|     | 24 : 8 | 64 : 8 | 40 : 8 | 48 : 8 |
|     | 32 : 8 | 72 : 8 | 24 : 8 | 64 : 8 |
|     | 40 : 8 | 80 : 8 | 8 : 8  | 80 : 8 |

61. Բնակչիկնոսպի № 1 տունն ունի 32 բնակարան, վորոնցից ամեն մի հարկում 8 բնակարան՝ իրենց բոլոր հարմարություններով: Քանի՞ հարկանի յե շենքը:



62. Հյուանները 56 մետր տախտակից դռներ պատ-  
րաստեցին, գործադրելով ամեն մի դռան համար 8 մետր  
տախտակ: Քանի՞ դռն պատրաստեցին:

63. Բանկոտպի ճաշարանն իր 8 խոզերին տալիս էր  
որական 64 կիլոգրամ կեր: մի խոզին 10 ուր կերակրելու  
համար ինչքան կեր էր հարկավոր:

64. Կաղմեցեք խնդիրներ, վերտեղ 72, 48, 24 բա-  
ժանված լինի 8-ի:

$$\begin{aligned} 65. \quad & 10 + (16 : 8) \quad (24 : 8) + (64 : 8) \\ & 25 - (40 : 8) \quad (80 : 8) - (40 : 8) \\ & 10 \times (72 : 8) \quad (64 : 8) \times (56 : 8) \end{aligned}$$

66. 8 հոգուց բաղկացած մի բրիգադ 2 ուր աշխա-  
տեց ճահիճների չորացման վրա, առաջին ուրը փորեցին  
32 մետր յերկարության առու, իսկ յերկրորդ ուրը՝ 16  
մետրով ավելի: Միջին հաշվով յուրաքանչյուրը 2 ուրում  
քանի՞ մետր յերկարության առու փորեց:

67. Յերկու կոլտնտեսության հոգերի սահմանում  
գտնվող ճահիճների չորացման աշխատանքներին առաջին  
կոլտնտեսությունից մասնակցում էին 10 բրիգադ 8-ա-  
կան հոգուց բաղկացած, իսկ յերկրորդից՝ 24 մարդով  
պակաս: Քանի՞ հոգուց էր բաղկացած յերկրորդ կոլտնե-  
սությունից մասնակցողների ամեն մի բրիգադը, յե-  
թե բաժանված էին 8 բրիգադի:

68. Կտրեցեք ստվարաթղթից մի քառակուսի, վրան

ուղիտակ թուղթ փակցրեք ու գրեցեք

8

ներքևի

դասարկ քառակուսիների վրայից քաշելով հաշվեցեք:

|                                                                                                           |                                                                                                            |
|-----------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------|
| <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 2$ | <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 10$ |
| <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 4$ | <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 5$  |
| <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 6$ | <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 9$  |
| <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 8$ | <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 3$  |
| <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 7$ | <div style="border: 1px solid black; width: 40px; height: 40px; display: inline-block;"></div> $\times 8$  |

Նույն ձևով պատրաստեցեք:

4

2

5

10



և հերթով քաշելով հաշվեցեք:

69. Պտեք անհայտ թիվը:

|                   |              |                   |
|-------------------|--------------|-------------------|
| $x \times 8 = 16$ | $x : 8 = 1$  | $8 \times x = 54$ |
| $x \times 8 = 24$ | $x : 8 = 3$  | $8 \times x = 56$ |
| $x \times 8 = 32$ | $x : 8 = 5$  | $8 \times x = 48$ |
| $x \times 8 = 40$ | $x : 8 = 7$  | $64 : x = 8$      |
| $x \times 8 = 48$ | $x : 8 = 9$  | $56 : x = 8$      |
| $8 \times x = 80$ | $80 : x = 8$ | $48 : x = 8$      |
| $8 \times x = 72$ | $72 : x = 8$ | $32 : x = 8$      |




70. Աշխատանքի սենյակում աշխատում եր 40 աշակերտ, յուրաքանչյուր 8 աշակերտին հասնում եր 5 մուրճ և 2 դանակ: Քանի մուրճ և քանի դանակ կար աշխատանքի սենյակում:





71. Քանի մասի յե բաժանված.

Քանի մասի յե բաժանված



Կտրածը թերթի վնր մասն ե:


72. Թուղթը ծախելով բաժանեցեք ութ մասի՝ այսպես.



Կտրածը թերթի վնր մասն ե.


Մեկ ութերորդ մասը գրվում ե այսպես  $\frac{1}{8}$ :

73. Հաշվեցեք՝ քանի  $\frac{1}{8}$  մաս ունի ամբողջ թերթը:






Քանի  $\frac{1}{8}$  մաս ունի շրջանը: Շրջանի վրա մասն է կտրված:



74. Վրն է շատ  $\frac{1}{2}$  թե  $\frac{1}{8}$ :



75. Վրն է շատ  $\frac{1}{4}$  թե  $\frac{1}{8}$ :  $\frac{1}{4}$  քանի  $\frac{1}{8}$ -ի յե հա-  
վասար:

76. Թղթի թերթը ծախելով բաժանեցք  $\frac{1}{8}$  մասի. —  
քանի  $\frac{1}{8}$  մաս ստացաք. կտրեցք 2 մաս. թերթի վրա  
մասը կտրեցիք. ուրեմն  $\frac{1}{4}$  քանի  $\frac{1}{8}$ -ե. կտրեցք նորից  
2 մաս. թերթի վրա մասը մնաց. ուրեմն  $\frac{1}{2}$ -ը քանի  $\frac{1}{8}$ -ե:

77. Աշակերտը 40 կոպեկ ուներ.  $\frac{1}{2}$  մասը տվեց զրբի

$\frac{1}{4}$  մասը՝ մատիտի, իսկ  $\frac{1}{8}$  մասը՝ տետրի: Իմացեք՝ ինչ  
արժեք ամեն մեկը:

$$\begin{aligned} 78. \quad 40 - \frac{1}{4} \text{ մասը} &= 10 & 40 - \frac{1}{2} \text{ մասը} &= 20 \\ 40 - \frac{1}{8} \text{ մասը} &= 5 & 40 - \frac{1}{8} \text{ մասը} &= 5 \\ 10 &= 5 + 5 & 20 &= 5 + 5 + 5 + 5 \\ \frac{1}{4} &= \frac{1}{8} + \frac{1}{8} \text{ մասի} & \frac{1}{2} &= \end{aligned}$$

Խ Ա Ղ

79.  $\frac{1}{2}$ -ի,  $\frac{1}{4}$ -ի յե  $\frac{1}{8}$ -ի.

Ուսուցիչն ասում է մի թիվ, իսկ աշակերտները  
գրում են տետրում բաժանելով  $\frac{1}{2}$ ,  $\frac{1}{4}$  և  $\frac{1}{8}$ -ի ախպես՝

|    |    |    |    |    |    |    |    |
|----|----|----|----|----|----|----|----|
| 80 |    |    |    |    |    |    |    |
| 40 |    |    |    | 40 |    |    |    |
| 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 | 20 |
| 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |



ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ 3-Ը

80. Համրիչի վրա հաշվեցեք յերեք-յերեք:

81. Հաշվեցեք՝ ավելացնելով 3 այսպես 3, 6 . . . մինչև 30-ը: Գրեցեք տետրում ստացվող թվերը:

82. Յետ հաշվեցեք պակսեցնելով 3 այսպես 30, 27 . . . մինչև 3-ը: Գրեցեք տետրում ստացվող թվերը:

83. 3 կեպեկանոցներով հաշվեցեք՝ քանի՞ կոպեկ ե

2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10  -ը:

|     |              |              |               |
|-----|--------------|--------------|---------------|
| 84. | $3 \times 1$ | $12 + 3$     | $21 + 3$      |
|     | $3 + 3$      | $3 \times 5$ | $3 \times 7$  |
|     | $3 \times 2$ | $15 + 3$     | $24 + 3$      |
|     | $6 + 3$      | $3 \times 6$ | $3 \times 9$  |
|     | $3 \times 3$ | $18 + 3$     | $27 + 3$      |
|     | $9 + 3$      | $3 \times 7$ | $3 \times 10$ |
|     | $3 \times 4$ |              |               |

85. Սովորական տետրը նրա տրաստվում ե 3 թերթ թղթից: Քանի՞ թերթ թուղթ ե հարկավոր 8, 7, 6, 5 տետր պատրաստելու համար:


86. Տնային տնտեսուհին կերակրի պատրաստման վրա որական 3 ժամ ե կորցնում: Տասնորյակում քանի՞ ժամ կազաավեր աշխատանքից, յեթե կերակրի պատրաստումը կատարելին բնակարանային փակ ճաշարանում:

$$3 \times 3$$

Արտահայտեցեք քառակուսու միջոցով.

$$\begin{array}{ll} 87. 20 + (3 \times 3) & (3 \times 6) + (3 \times 5) \\ 90 - (3 \times 7) & (3 \times 4) - (3 \times 2) \\ 3 \times 9 - 15 & (3 \times 10) - (3 \times 7) \\ 3 \times 8 + 40 & (3 \times 3) + (3 \times 3) \end{array}$$

88. «Նորհրդային Հայաստան» սովառնակի կառուցման համար մի կողեկավի անդամները 10-ը մուծեցին 3-ական ոտբլի, իսկ 8-ը՝ 5-ական ոտբլի: Քանի՞ ոտբլի մուծեցին:



Սովառնակ

89. Տրակտորը 20 ժամվա աշխատանքի ընթացքում նախատեսված 32 կիլոգրամ նավթի փոխարեն գործադրում եր 29 կիլոգրամ: 10 որում տնտեսված նավթով քանի՞ որ կաշխատի տրակտորը:

90. Աշակերտի գնումները տարեսկզբին:

| Պիտույքների անունը | Քանակը | Արժեքը | Ի՞նչքան ե վճարված |
|--------------------|--------|--------|-------------------|
| Տետր . . . . .     | 10     | 4 կոպ. |                   |
| Մատիտ . . . . .    | 3      | 5 կոպ. |                   |
| Գրչածայր . . . . . | 3      | 2 կոպ. |                   |
| Գրչակոթ . . . . .  | 2      | 3 կոպ. |                   |



Արտագրեցե՛ք այս աղյուսակը տետրում, իմացե՛ք առանձին-առանձին ինչքան վճարվեց տետրերի, մատիտ-ների, զրչածայրերի ու զրչակոթների համար և գրեցե՛ք չորրորդ սյունակում:

Հաշվեցե՛ք վճարքան ե վճարված բոլոր պիտույքների համար:

91. Աշակերտը գնեց աշկոուպից 1 ուտին 15 կոպե-կով, 10 թերթ ծծողական, թերթը 1 կոպեկով, 5 նկար-չուծյան տետր հատը 10 կոպեկով:

Կազմեցե՛ք այդ գնումների աղյուսակը վերևի ձևով:

92. Կազմեցե՛ք ձեր կատարած գնումների աղյուսակը:

### ԲԱԺԱՆԵԼ 3-Ի ՎՐԱ

1. 27 լուցիկին հավասարապես տեղավորեցե՛ք 3 դա-տարկ տուփերի մեջ. ինչքան ստացա՛ք:

2. 30 աշակերտը յեթե յերեք-յերեք նստացնելու-լինենք, քանի՞ նստարան կպահանջվի:

3. 15 ուղբիկն փոխարինեցե՛ք 3 ուղբիանոցներով: Քանի՞ 3 ուղբիանոց պետք ե ստանա՛ք:

|    |        |        |        |
|----|--------|--------|--------|
| 4. | 3 : 3  | 12 : 3 | 27 : 3 |
|    | 6 : 3  | 15 : 3 | 24 : 3 |
|    | 9 : 3  | 30 : 3 | 21 : 3 |
|    | 24 : 3 | 21 : 3 | 18 : 3 |

5. Մի շապիկին գնում ե 3 մետր կտոր: 24 մետր կտորից քանի՞ շապիկ կարելի յե կարել:

6. Մի վերարկվին կպցնում են 3 կոճակ: Քանի՞ վե-րարկվի կհերիքի 30 կոճակ:

$$\begin{aligned}
 7. \quad & 75 - (18 : 3) & 6 + 24 : 3 \\
 & 40 + (15 : 3) & 6 + (24 : 3) \\
 & 5 \times (9 : 3) & 57 - 30 : 3 \\
 & & 57 - (30 : 3) \\
 & & 5 \times 6 : 3 \\
 & & 5 \times (6 : 3)
 \end{aligned}$$

8. 3 որում ձեռքով աշխատողը կարում ե 2, կարի մեքենայով աշխատողը՝ 10, իսկ կարի գործարանի բան-վորուհին՝ 30 շապիկ: Գործարանի բանվորուհին քանի՞ անգամ ե արագ աշխատում ձեռքով և մեքենայով կարո-ղից և որական քանի՞ շապիկ ե կարում:

9. Գործարանը 3 ամսում պատրաստեց 36 շոգեքարշ: Միջին հաշվով ամսական քանի՞ շոգեքարշ պատրաստեց գործարանը:

10. Քամհար մեքենա պատրաստելը գործարանի վրա նստում ե 30 ուղբիկ, վորի  $\frac{1}{2}$  գնում ե հումքին, յեր-րորդ մասը բանվորներին, վորպես աշխատավարձ և 1 ուղբիկ յեղ վառելանյութի: Վճրքան ե մեքենայի արտա-դրության և վորքան մյուս ծախսերը:

11. Գտե՛ք անհայտ թիվը.

|                   |              |                   |
|-------------------|--------------|-------------------|
| $x \times 3 = 6$  | $3 : x = 3$  | $3 \times x = 15$ |
| $x \times 3 = 12$ | $6 : x = 3$  | $3 \times x = 9$  |
| $x \times 3 = 18$ | $9 : x = 3$  | $3 \times x = 3$  |
| $x \times 3 = 24$ | $12 : x = 3$ | $x : 3 = 3$       |
| $x \times 3 = 30$ | $15 : x = 3$ | $x : 3 = 9$       |
| $3 \times x = 27$ | $x : 3 = 6$  | $x : 3 = 10$      |
| $3 \times x = 21$ | $x : 3 = 7$  |                   |



Գրեցէք տետրում X-ի տեղ գնելով անհայտ թիվը:

12. Արագ բանավոր հաշիվ.

$$\begin{array}{r} 2 \times 6 \\ : 2 \\ + 9 \\ - 3 \end{array} \quad \begin{array}{r} 2 \times 7 \\ : 2 \\ + 8 \\ - 5 \end{array} \quad \begin{array}{r} 2 \times 8 \\ : 2 \\ + 4 \\ - 6 \end{array} \quad \begin{array}{r} 2 \times 9 \\ : 7 \\ + 4 \\ - 7 \end{array}$$

$$\begin{array}{r} 3 \times 4 \\ : 4 \\ + 8 \\ - 2 \end{array} \quad \begin{array}{r} 3 \times 5 \\ : 3 \\ + 9 \\ - 5 \end{array} \quad \begin{array}{r} 3 \times 6 \\ : 3 \\ + 9 \\ - 7 \end{array} \quad \begin{array}{r} 4 \times 3 \\ : 3 \\ + 9 \\ - 7 \end{array}$$

$$\begin{array}{r} 4 \times 4 \\ : 2 \\ + 8 \\ - 6 \end{array} \quad \begin{array}{r} 5 \times 3 \\ : 3 \\ + 8 \\ - 7 \end{array} \quad \begin{array}{r} 5 \times 4 \\ : 4 \\ + 7 \\ - 8 \end{array} \quad \begin{array}{r} 4 \times 5 \\ : 5 \\ + 9 \\ - 8 \end{array}$$

ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ 6-Ը

13. Լուցկիները վեց-վեց կապեցէք. հաշվեցէք՝ քանի՞ լուցկի կա 2 կապում, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 կապում:

14. Հաշվեցէք 6-ից մինչև 60 ավելացնելով 6. յետ հաշվեցէք՝ պակսեցնելով 6:

$$\begin{array}{r} 15. \quad 6 \times 1 \\ 6 \times 2 \\ 6 \times 3 \\ 6 \times 4 \end{array} \quad \begin{array}{r} 6 \times 5 \\ 6 \times 6 \\ 6 \times 7 \\ 6 \times 8 \end{array} \quad \begin{array}{r} 6 \times 9 \\ 6 \times 10 \\ 6 \times 3 \\ 6 \times 7 \end{array} \quad \begin{array}{r} 6 \times 8 \\ 6 \times 4 \\ 6 \times 9 \\ 6 \times 3 \end{array}$$

16. Կարի գործարանում վերարկվին կպցնում են 6 կոճակ, 9, 7, 8, վերարկվին քանի՞ կոճակ ե պետք:

17. Ծառայողն որական աշխատում ե 6 ժամ. վեցորյակում քանի՞ ժամ ե աշխատում:

$$\begin{array}{r} 18. \quad 30 + (6 \times 6) \\ 90 - (6 \times 7) \\ 75 - (6 \times 3) \\ 47 + (6 \times 4) \end{array} \quad \begin{array}{r} 4 + 6 \times 5 \\ 4 + (6 \times 5) \\ 16 - 6 \times 2 \\ 16 - (6 \times 2) \end{array}$$

19. Մի ընտանիքում երեկտրական լամպը ձմեռվա ամիսներին վառում եյին յերեկոյան ժամի 4-ից մինչև 10-ը, Հնգորյակում քանի՞ ժամ եր այրվում լամպը:

20. Խրճիթ-ընթերցարանում որական վառում եյին 6 կիրգրամ նավթ, տասնորյակում տնտեսեցին 5 կիրգրամ նավթ: Վճրքան նավթ վառեցին տասնորյակում:

21. Կտորի մետրն արժեք 6 ուրլի. գնեցին 8 մետր ե դրամարկղում վճարեցին 50 ուրլի: Քանի՞ ուրլի պետք ե յետ ստանալին:

ԲԱԺԱՆԵԼ 6-Ի ՎՐԱ

22. 60 լոբու հատիկներ հաժաոտրապես տեղավորեցէք 6 լուցկու դոտարկ տուփերում. ամեն մեկում ինչքան ստացաք:

23. 30 կոպեկը բաժանեցէք հաժաոտրապես 6 աշակերտի: Վճրքան ստացավ ամեն մեկը:

24. Խմբի 36 աշակերտին յեթե վեց-վեց կոնդնեցնէք, քանի՞ շարք կստացվի:



$$\begin{array}{llll}
 25. & 6 : 6 & 6 \times 4 & 36 : 6 & 6 \times 9 \\
 & 6 \times 2 & 24 : 6 & 6 \times 7 & 54 : 6 \\
 & 12 : 6 & 6 \times 5 & 42 : 6 & 6 \times 10 \\
 & 6 \times 3 & 30 : 6 & 6 \times 8 & 60 : 6 \\
 & 18 : 6 & 6 \times 6 & 48 : 6 & 
 \end{array}$$

26. Կոտայերատիվից գնեցին 6 մետր կտոր և վճարեցին 24 ուրբլի. վճարեցի աւրժեր մետրը:

27. Դպրոցի չքավոր աշակերտութեան բաժանեցին 54 ուրբլու կոշիկ. զույգն աւրժեր 6 ուրբլի: Քանի՞ զույգ կոշիկ բաժանեցին:

28. Քանի՞ վեցորդակ ունի ամիսը:

$$\begin{array}{ll}
 29. & 42 - (24 : 6) & 24 + (12 : 6) \\
 & 42 - 24 : 6 & 24 + 12 : 6)
 \end{array}$$

$$10 \times (6 : 6)$$

$$10 \times 6 : 6$$

30. Կոտայերատիվում չափարտացրած 6 կտոր հավասար հողամասերից ստացավ 30 ցենտներ բամբակ, իսկ պարարտացրած նույնչափ հողամասից 24 ցենտներով ավելի: Պարարտացրած 1 կտոր հողամասից քանի՞ ցենտներով ավելի ստացավ:

31. Գյուղի յերեք կուրակներին տրված եր առաջադրանք հանձնելու, առաջինին՝ 15, յերկրորդին՝ 25, իսկ յերրորդին՝ 20 ցենտներ բամբակ. յերկրորդ բամբակահավաքին յերեքը միասին հանձնեցին առաջադրանքի միայն վեցերորդ մասը, փոխանակ 40 ցենտների: Քանի՞ ցենտներ ժամանակին հանձնելու խուսափեցին կուրակները:

32. Գտեք անհայտ թիվը.

$$\begin{array}{ll}
 x \times 6 = 18 & 12 : x = 6 \\
 x \times 6 = 30 & 24 : x = 6 \\
 x \times 6 = 42 & 42 : x = 6 \\
 x \times 6 = 54 & 48 : x = 6 \\
 6 \times x = 60 & x : 6 = 9
 \end{array}$$

$$6 \times x = 48$$

$$6 \times x = 36$$

$$6 \times x = 24$$

$$x : 6 = 10$$



33. Տրակտորի գործարանում յուրաքանչյուր 6 ըուպեյում մի տրակտոր ե պատրաստվում: Քանի՞ տրակտոր ե պատրաստվում 1 ժամում, 2, 4, 6 ժամում:

7-ժամյա բանվորական որում գործարանում մի հերթի աշխատանքի ընթացքում քանի՞ տրակտոր ե պատրաստվում:



34.

ԽԱՂ ԶՈՒՅԳ ԽԱՂԱԹՂԹՈՎ

Խաղաթղթերի վրա գրում եք 6-ի բազմապատկման թվական որինականերն այսպես՝

|              |               |              |              |
|--------------|---------------|--------------|--------------|
| $6 \times 1$ | $6 \times 2$  | $6 \times 3$ | $6 \times 4$ |
| $6 \times 5$ | $6 \times 6$  | $6 \times 7$ | $6 \times 8$ |
| $6 \times 9$ | $6 \times 10$ |              |              |

Մյուս խաղաթղթերի վրա գրում եք սրանց պատասխանները—

|   |    |    |          |
|---|----|----|----------|
| 6 | 12 | 18 | և այդպես |
|---|----|----|----------|

Խաղաթղթերի վրա գրում եք խաղում եք յերկու հոգով, մեկը վերջնում է խաղաթղթերը թվական որինականերով, իսկ մյուսը—խաղաթղթերը պատասխաններով: Առաջինը հերթով, յերբ սեղանին դնում է իր ցանկացած խաղաթուղթը, յերկրորդը պետք է ամեն անգամ դնի նրա կողքին այն խաղաթուղթը, վորը համապատասխանում է թվական որինականի պատասխանին:

35.

|  |  |  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|--|--|
|  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |  |  |

$$8 \times 3$$

$$3 \times 8$$

Վերելից-ներքև հաշված քանի շարք կա. Ամեն մի շարքում քանի քառակուսի յե. Ընդամենը քանի քառակուսի յե. Գրեցեք այսպես.  $8 \times 3 = 24$ . Այժմ հաշվեցեք աջից-ձախ. քանի շարք կա. Ամեն մի շարքում քանի քառակուսի յե. Ընդամենը քանի քառակուսի յե. Գրեցեք այսպես.  $3 \times 8 = 24$ .

Նկարի վրա ույց տվեք, վոր  $3 \times 8$  հավասար է  $8 \times 3$ -ի:

36.

|  |  |  |  |  |  |
|--|--|--|--|--|--|
|  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |
|  |  |  |  |  |  |

$$6 \times 4$$

$$4 \times 6$$

Նկարի վրա ցույց տվեք, վոր  $6 \times 4$  հավասար է  $4 \times 6$ -ի:



37. Լուցկիներով կամ լոբու հատիկներով ախպիտի կույտեր շինեցեք, վոր ստանաք  $5 \times 4$  և հետո  $4 \times 5$ ։ Հաշվեցեք և համեմատեցեք՝ հավասար են դրանք թե անհավասար։

38. Գրեցեք տեսրում և լրացրեք բաց թողած թվերը։

$$\begin{array}{l} 3 \times 4 \text{ կամ } 4 \times 3 \\ 8 \times 2 \text{ » } 2 \times \\ 4 \times 8 \text{ » } 8 \times \\ 5 \times 6 \text{ » } 6 \times \\ 7 \times 2 \text{ » } 2 \times \\ 9 \times 3 \text{ » } 3 \times \end{array}$$

39. Հաշվեցեք.

$$\begin{array}{llll} 18 : 6 & 24 : 4 & 40 : 5 & 48 : 8 \\ 18 : 3 & 24 : 6 & 40 : 8 & 48 : 6 \\ 24 : 3 & 32 : 8 & 30 : 5 & 40 : 10 \\ 24 : 8 & 32 : 4 & 30 : 6 & 40 : 4 \end{array}$$

ԲԱՁՄԱԳՍՏԿԵԼ 9-Ը

40. Համընչի վրա հաշվեցեք իննը-իննը։

41. Հաշվեցեք ավելացնելով 9 ախպես 9, 18 . . . մինչև 90։

42. Յետ հաշվեցեք պակսեցնելով 9 ախպես 90, 81 . . . մինչև 9։

43. Տեսրում գրեցեք այդ թվերը։

$$\begin{array}{ccc} \boxed{9} & \boxed{9+9} & \boxed{9+9+9} \\ 9 \times 1 & 9 \times 2 & 9 \times 3 \end{array}$$

$$\begin{array}{cc} \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9 \end{array}} & \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9+9 \end{array}} \\ 9 \times 4 & 9 \times 5 \end{array}$$

$$\begin{array}{ccc} \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9+9+9 \end{array}} & \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9+9+9 \\ 9 \end{array}} & \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9+9+9 \\ 9+9 \end{array}} \\ 9 \times 6 & 9 \times 7 & 9 \times 8 \end{array}$$

$$\begin{array}{cc} \boxed{\begin{array}{c} 9+9+9 \\ 9+9+9 \\ 9+9+9 \end{array}} & \boxed{\begin{array}{c} 9+9+9+9 \\ 9+9+9 \\ 9+9+9 \end{array}} \\ 9 \times 9 & 9 \times 10 \end{array}$$

44. Վեր ուրինակներն են ավելի հեշտ ու արագ գրվում—գումարման թե՛ բազմապատկման։ Տեսրում գրեցեք ավելի արագ ու հեշտ գրվող ուրինակները և հաշվեցեք։





45. Մի զույգ դահուկն արժե 9 ուլբլի  
 6 զույգն արժե . . . . ուլբլի  
 8 զույգն արժե . . . . ուլբլի  
 5 զույգն արժե . . . . ուլբլի  
 7 զույգն արժե . . . . ուլբլի

46. Կորտնտեսությունը բամբակազտիչ գործարանին առաջին հավաքից հանձնեց 8 ֆուրգոն բամբակ: Վերջան բամբակ հանձնեց, յեթե ամեն մի ֆուրգոնին բարձված էր 9 ցենտներ:

47. Սղլիկը 9 տարեկան էր, իսկ մայրը 4 անգամ ավելի: Քանի՞ տարեկան էր մայրը:

48.  $9 \times 9$

Արտահայտեցեք քառակուսու միջոցով.

- |                         |                      |
|-------------------------|----------------------|
| 49. $32 + (9 \times 3)$ | $92 - (9 \times 8)$  |
| $47 + (9 \times 5)$     | $100 - (9 \times 7)$ |
| $70 - (9 \times 6)$     | $19 - (9 \times 2)$  |
| $40 - (9 \times 4)$     | $19 - 9 \times 2$    |

50. Հայաստանում մի կտոր հողամասից ստացվում է 12 ցենտներ բամբակ, իսկ առաջ ստացվում էր 3 ցենտներով պակաս: Վերջին էր ստացվում առաջ 7 կտոր հողամասից:

51. Թորանտեսությունում կովին տալիս են առափոյան 3՝ կեսորին՝ 2, իսկ յերեկոյան՝ 4 կիրգրամ խոտ: Տասնորյակում ինչքան խոտ են տալիս:

52. Քառակուսի թղթերի վրա գրեցեք 3 6

9 և հերթով քաշելով դատարկ քառակուսիների վրայից՝ հաշվեցեք.



|                      |   |   |                      |   |    |
|----------------------|---|---|----------------------|---|----|
| <input type="text"/> | × | 2 | <input type="text"/> | × | 10 |
